նենալով նրան ոչ միայն մխիթարել և հարսանիքին ուրախ մասնակցել տալ, այլ անշուշտ նաև նրա նոր ննջեցյալին բավարարած լինելը։ Փեսացուն շրջելով քահանայի հետ նոր ննջեցյալ ունեցող բարեկամների տները հարսանիքին հրավիրելու համար՝ հոգոց էր ասել տալիս և թողնում էր յուրաքանչյուր տանը մի շիշ օղի, անշուշտ ոչ թե կենդանի մնացողներին ուրախ տրամադրությամբ հարսանքավորներ ունենալու, այլ կրկին այդ միջոցով նաև ննջեցյալներին բավարարած և հրավիրած լինելու համար։ Բոլոր հարսանեկան սեղաններին ոչ թե միայն քահանան էր սեղանը օրհնելիս հիշատակում բոլոր ննջեցյալներին, այլև թամադան առաջին թասը նրանց հոգիներին էր նվիրում՝

«Աստված բոլոր ննջեցյալների հոգիքը լուսավոր անի»։

Այս ամենով հատկապես ընդգծվում էր, որ նոր զույգը կոչված էր շարունակելու նախահայրերի սերունդը և նրանց հետ անբաժան միասնություն էր կազմում։

Զանգեզուրի հարսանեկան սովորությունների մեջ դեռ մնում էր հիշատակ այն ժամանակներից, երբ նոր ամուսնությունը համարվում էր ոչ միայն մերձավոր տոհմը, այլ ամբողջ համայնքը շահագրգռող գործ։ Այդ է պատճառը, որ երբ աղջիկը բերվում էր մի այլ գյուղից՝ պահանջվում էր, որ տղայի հայրը, իր ազգականների հետ գնալով նախօրոք այն գյուղը, տանուտերից համաձայնություն արած լիներ աղջիկ տանելու, նրան մի գումար վճարած՝ 40 կոպեկից մինչև 1 ռուբլի և, ի նշան նրա համաձայնության, նրա տերողորմյան ներկայացներ պսակող քահանային։ Հայաբնակ ուրիշ վայրերում այսպիսի դեպքերում աղջկա գյուղի երիտասարդները աղջիկը ճանապարհ ձգելիս ձևական ընդդիմադրություն էին ցույց տալիս և միայն մի գումար ստանալուց հետո աղջկան բաց էին թողնում։ Այս մանրամասնությունը Զանգեզուրի հարսանեկան սովորությունների մեջ ոչ մի տեղ չի պահպանվել, ինչպես և շատ թույլ հիշողություն է մնացել, որ աղջկան մի թաղից մյուս թաղը տանելիս նրա թաղեցիք մի ժամանակ ընդդիմադրություն էին ցույց տալիս։ Հնում թաղերը տոհմական միություններ էին, ինչպես այդ պահպանվել էր օրինակ Ջավախքի Կարզախ գյուղում կամ նույն Զանգեզուրի Խնձորեսկ գյուղում։ Մինչև վերջերքն էլ ձմեռը, երբ պսակվող զույգը գնում էր եկեղեցի, թաղի տղաները ձնագնդեր էին տեղում նրա վրա։

Հնուց պահպանվող ազգակցական կապերի ուժն ամենից ցայտուն կերպով երևան էր գալիս այն սովորության մեջ, որ հարսանեկան ծախքերին մասնակցում էին նաև տղատիրոջ ազգականներն ու բարեկամները, ոչ միայն միևնույն գյուղում ապրողները, այլև հեռավոր գյուղերից եկողները, որոնցից մի քանիսը բերում էին նույնպես նվերներ այն ազգականներից, որոնք այդ գյուղերից որևէ պատճառով հարսանիքին ներկա գտնվել չէին կարողանում։ Այդ օգնությունը տրվում էր հրապարակորեն հարսանեկան ծիսակատարությունները վերջացնելու միջոցին։ Տեղի էր ունենում Կանչը։ Թմբկահարը դնում էր մեջտեղ նրղարան, տրիոլը, ղավալը՝ թմբուկը գյուղի տանուտերի առջև, որը գրեթե միշտ ներկա էր գտնվում հարսանեկան հանդեսին, կամ նրա բացակայության դեպքում՝ տղայի հոր առջև։ Կանչվում էր նախ տան ամենամոտիկ բարեկամը, սովորաբար քավորը, և նա դնում էր թմբուկի վրա իր դրամական նվերը։ Նաղարա թիսողը՝ տրիոլչին բարձրաձայն հայտարարում էր.

«Քավոր Թոնին կանչեց էսքան մանէթ։ Իրէն ազապին (չամուսնացածին) էլ փոխ ինի՞»։